3280

361
4-21

Գ.Ի.
Հ.Ա.Ը.

1908թ

1 MAR 201

370
1981-4U

3280

# УСТАВЪ

## С.-Петербургскаго Попечительнаго

## объ Армянахъ Общества

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ

## ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Публичная Библиотека 7/XI 1922 имени А. Мясникяна

С.-ПЕТЕРБУРГЪ
„Пушкинская Скоропечатня", Лештуковъ 4
1908

17 MAY 2013 42.808

На подлинномъ написано:

Опредѣленіемъ С.-Петербургскаго Особаго Городского по дѣламъ объ обществахъ Присутствія отъ 6 февраля 1907 г. внесено въ реестръ Обществъ Гор. С.-Петербурга за № 46.

Подписалъ С.-Петербургскій Градоначальникъ

Генералъ-Маіоръ Драчевскій.

# УСТАВЪ

## С.-Петербургскаго Попечительнаго объ Армянахъ Общества.

---

### Цѣль Общества.

§ 1.

С.-Петербургское Попечительное объ Армянахъ Общество имѣетъ своею цѣлью доставленіе средствъ къ улучшенію нравственнаго и матеріальнаго состоянія нуждающихся армянъ, проживающихъ въ С.-Петербургѣ и его окрестностяхъ.

§ 2.

Сообразно съ этою цѣлью, занятія Общества составляютъ: а) доставленіе одежды, пищи, крова и денежныхъ пособій немогущимъ пріобрѣтать ихъ собственными трудами; б) содѣйствіе къ пріисканію занятій или службы, къ пріобрѣтенію матеріаловъ для работъ и къ выгодному сбыту издѣлій бѣд-

*Իսկականի վրայ գրուած է՝*

*Ընկերութեան գործերին վերաբերեալ Ս.-Պետերբուրգի Քաղաքային Յատուկ Ատեանի 1907 թ. փետրուարի 6-ի որոշմամբ մուծուած է Ս.-Պետերբուրգ քաղաքի ընկերութիւնների ցանկի մէջ, Թ. 46։*

*Ստորագրել է Ս.-Պետերբուրգի քաղաքապետ*

*Գեներալ-Մայոր Դրաչևսկի։*

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

---

### *Ընկերութեան նպատակը։*

§ 1.

*Ս.-Պետերբուրգի Հայոց Խնամատար Ընկերութեան նպատակն է միջոցներ հայթայթել Պետերբուրգում և նրա արուարձաններում ապրող կարօտ հայերի նիւթական և բարոյական վիճակի բարւոքման համար։*

§ 2.

*Այս նպատակի համաձայն Ընկերութեան զբաղմունքներն են. ա) հագուստ, սնունդ, բնակարան և դրամական նպաստ տալ նրանց, որոնք անկարող են ձեռք բերել սեփական աշխատանքով. բ) Օգնել պարապմունք կամ պաշտօն գտնելու, աշխատանքի համար նիւթ ձեռք բերելու և աղքատ աշխատա-*

ныхъ тружениковъ; в) доставленіе и облегченіе способовъ для призрѣнія и воспитанія или обученія сиротъ и дѣтей неимущихъ родителей; г) снабженіе бѣдныхъ медицинскими пособіями; д) помѣщеніе престарѣлыхъ и неизлѣчимыхъ въ богадѣльни; е) устройство по мѣрѣ развитія средствъ Общества школъ на основаніи дѣйствующихъ правилъ объ Армянскихъ школахъ, а также библіотекъ, читаленъ, дѣтскихъ пріютовъ, богадѣленъ и тому подобныхъ благотворительныхъ учрежденій; ж) доставленіе неимущимъ средствъ къ возвращенію на родину; з) выдача пособій на похороны бѣдныхъ; и) распространеніе общеполезныхъ книгъ.

### Составъ Общества.

§ 3.

Общество состоитъ изъ неограниченнаго числа членовъ обоего пола всѣхъ сословій и званій.

**Примѣчаніе.** Членами Общества не могутъ быть: несовершеннолѣтніе, состоящіе на дѣйствительной военной службѣ нижніе чины, учащіеся въ учебныхъ заведеніяхъ и лица подвергшіяся ограниченію правъ по суду.



ւորների ձեռքի արդիւնքը շահաւէտ կերպով վաճառելու. գ) Միջոցներ տալ և դիւրացնել որբերի և չքաւոր ծնողների զաւակների խնամատարութիւնը, կրթութիւնը և ուսումը. դ) Աղքատներին բժշկական օգնութիւն մատակարարել. ե) Ծերերին և անբուժելի հիւանդներին հիւանդանոց և անկելանոց տալ. զ) Ընկերութեան միջոցների ընդարձակման չափով հիմնել դպրոցներ, հայոց դպրոցների համար սահմանուած կանոնների հիման վրայ, նաև գրադարաններ, ընթերցարաններ, մանուկների ապաստարաններ, անկելանոցներ և այլ բարեգործական հիմնարկութիւններ. է) Չքաւորներին միջոց տալ հայրենիք վերադառնալու. ը) Նպաստ տալ աղքատների թաղման համար. թ) Տարածել հանրօգուտ գրքեր։

### Ընկերութեան կազմը։

§ 3.

Ընկերութիւնը կազմւում է ամեն դասակարգի պատկանող երկու սեռի անձերից, որոնց թիւը սահմանափակուած չէ։

**Ծանօթութիւն.** Ընկերութեան անդամ չեն կարող լինել անչափահասները, իսկական զինուորական ծառայութեան մէջ եղող ստորին պաշտօնեաները, դպրոցներում սովորողները և նրանք, որոնց իրաւունքները սահմանափակուած են դատաստանով։

§ 4.

Члены Общества раздѣляются: на почетныхъ, пожизненныхъ и дѣйствительныхъ.

§ 5.

Почетными членами Общества состоятъ лица, сдѣлавшія значительныя пожертвованія въ пользу Общества или оказавшія ему иныя существенныя услуги, и избранныя въ это званіе Общимъ Собраніемъ Членовъ Общества.

**Примѣчаніе.** Предложеніе объ избраніи кого либо въ почетные члены, вносится предварительно въ Правленіе Общества и съ отзывомъ послѣдняго въ Общее Собраніе.

§ 6.

Пожизненными членами Общества состоятъ лица, избранныя Правленіемъ и внесшія въ пользу Общества единовременно не менѣе ста рублей.

§ 7.

Дѣйствительными членами Общества состоятъ лица, избранныя Правленіемъ и уплачивающія ежегодно въ кассу Общества взносъ въ размѣрѣ, опредѣляемомъ Общимъ Собраніемъ, не менѣе пяти рублей.



§ 4.

*Ընկերութեան անդամները լինում են. պատուաւոր, մշտական և իսկական։*

§ 5.

*Ընկերութեան պատուաւոր անդամ լինում են այն անձինք, որոնք մեծ նուիրաբերութիւններ են անում Ընկերութեան օգտին կամ ուրիշ կարևոր ծառայութիւններ են մատուցանում. պատուաւոր անդամներն ընտրւում են Ընկերութեան Ընդհանուր Ժողովում։*

**Ծանօթութիւն.** *Որևէ մէկին պատուաւոր անդամ ընտրելու առաջարկը նախապէս ներկայացւում է Ընկերութեան Վարչութեանը, որը իւր կարծիքով միասին ներկայացնում է Ընդհանուր Ժողովին։*

§ 6.

*Ընկերութեան մշտական անդամներ են այն անձինք, որոնք տալիս են յօգուտ Ընկերութեան միանուագ ոչ պակաս քան հարիւր ռուբլի և ընտրւում են Վարչութեան կողմից։*

§ 7.

*Ընկերութեան իսկական անդամներ են այն անձինք, որոնք իւրաքանչիւր տարի վճարում են Ընկերութեան Ընդհանուր Ժողովի որոշմամբ սահմանուած գումարը, ոչ պակաս քան հինգ ռուբլի, և ընտրւում են Վարչութեան կողմից։*

§ 8.

Дѣйствительные члены, неуплатившіе, до ближайшаго Общаго Собранія слѣдуемаго съ нихъ взноса за текущій годъ, не имѣютъ права участвовать въ собраніи; члены же, неуплатившіе взноса въ теченіе года, считаются выбывшими изъ состава Общества, съ сохраненіемъ, однако, права вступить снова въ оное на общемъ основаніи.

§ 9.

Члены Общества, дѣйствія которыхъ нарушаютъ интересы онаго, могутъ быть исключены изъ состава Общества лишь по постановленію Общаго Собранія.

### Средства Общества.

§ 10.

Средства Общества составляются изъ: а) членскихъ взносовъ, пожертвованій членовъ Общества, постороннихъ лицъ или различныхъ учрежденій, какъ деньгами, такъ и вещами, и отказовъ по духовнымъ завѣщаніямъ; б) доходовъ отъ капиталовъ и имуществъ Общества; в) доходовъ отъ театральныхъ представленій, литературныхъ чтеній, публичныхъ лекцій, концертовъ, лоттерей и т. п., устраиваемыхъ Обществомъ съ соблюденіемъ правилъ, установленныхъ на сей предметъ дѣйствующими узаконеніями; г) сбора по подписнымъ листамъ и



§ 8.

Այն իսկական անդամները, որոնք մինչև մօտակայ Ընդհանուր Ժողովը չեն վճարել նոյն տարուայ անդամավճարը, իրաւունք չունեն Ընդհանուր Ժողովին մասնակցելու։ Իսկ այն անդամները, որոնք անդամավճարը ամբողջ տարուայ ընթացքում չեն վճարել, համարւում են Ընկերութեան կազմից դուրս եկած, պահելով սակայն իրաւունք նորից անդամակցելու, ընդհանուր հիմունքներով։

§ 9.

Այն անդամները, որոնց գործողութիւնները խանգարում են Ընկերութեան շահերը, կարող են հեռացուել Ընկերութիւնից միմիայն ընդհանուր ժողովի որոշմամբ։

### Ընկերութեան միջոցները։

§ 10.

Ընկերութեան միջոցները կազմւում են. ա) Անդամավճարները, Ընկերութեան անդամների, կողմնակի անձանց կամ զանազան հաստատութիւնների նուիրատուութիւնները թէ դրամով և թէ իրեղէններով, նաև կտակներով յատկացրած գումարները. բ) Ընկերութեան դրամագլուխների և կայքերի եկամուտները. գ) Տիրող օրէնքների համաձայն Ընկերութեան սարքած թատերական ներկայացումների, գրական ընթերցումների, հրապարակական դասախօսութիւնների, նուագահանդէսների և վիճակախաղերի արդիւնքը. դ) Ընկերու-

книжкамъ, выдаваемымъ Правленіемъ членамъ Общества; д) сбора въ кружки, выставляемыя съ надлежащаго отъ властей разрѣшенія и за печатью Общества.

§ 11.

Изъ единовременныхъ взносовъ пожизненныхъ членовъ, а также изъ опредѣляемой постановленіемъ Общаго Собранія части прочихъ поступленій въ Общество, за исключеніемъ доходовъ съ суммъ, пожертвованныхъ со специальною цѣлью, образуется запасный капиталъ, расходуемый не иначе, какъ по постановленію Общаго Собранія. Съ запаснаго капитала обращаются на текущія нужды Общества только проценты.

§ 12.

Изъ суммъ или имущества, пожертвованныхъ, либо завѣщанныхъ Обществу съ строго опредѣленною цѣлью или отчисленныхъ Общимъ Собраніемъ на опредѣленныя цѣли, образуются спеціальные капиталы Общества.

Спеціальные капиталы неприкосновенны; доходы же съ нихъ должны быть обращаемы исключительно на опредѣленное спеціальное назначеніе.

§ 13.

Капиталы Общества обращаются въ государственныя или гарантированныя Правительствомъ про-



թեան Վարչութիւնից անդամներին տրուած ստորագրութեան թերթերով և գրքոյկներով հանգանակած դրամները. ե) պատշաճաւոր իշխանութիւնների թոյլտուութեամբ տրուած և Ընկերութեան կնքով կնքուած գանձանակների արդիւնքը։

§ 11.

Մշտական անդամների միանուագ վճարներից, նաև Ընկերութեան բոլոր միւս եկամուտների այն մասից, որ որոշում է Ընդհանուր Ժողովը, բացի յատուկ նպատակով նուիրուած գումարների եկամուտներից, գոյանում է պահեստի դրամագլուխ, որ ուրիշ կերպ չի ծախսւում, բայց եթէ Ընդհանուր Ժողովի որոշմամբ։ Պահեստի դրամագլխից գործ են դրւում Ընկերութեան ընթացիկ կարիքների վրայ միմիայն տոկոսները։

§ 12.

Յատուկ նպատակներով Ընկերութեանը նուիրուած կամ կտակուած, նաև Ընդհանուր Ժողովի վճռով որոշ նպատակների յատկացրած գումարներից գոյանում են Ընկերութեան յատուկ դրամագլուխները, որոնք անձեռնմխելի են, իսկ նրանց եկամուտները պէտք է գործ դրուին բացառապէս որոշ, յատուկ նպատակների համար։

§ 13.

Ընկերութեան դրամագլուխները փոխարկւում են պետական կամ Կառավարութիւնից ապահով-

центныя бумаги и хранятся въ учрежденіяхъ государственнаго банка. Расходный капиталъ долженъ храниться на текущемъ счету въ одномъ изъ кредитныхъ учрежденій въ г. С.-Петербургѣ.

На рукахъ у предсѣдателя или казначея могутъ находиться незначительныя суммы, необходимыя на ближайшіе текущіе расходы. Размѣръ этихъ суммъ, а равно и расходнаго капитала опредѣляются Общимъ Собраніемъ.

§ 14.

Расходованіе суммъ производится Правленіемъ Общества на основаніи смѣты, утверждаемой Общимъ Собраніемъ ежегодно. Сверхсмѣтные расходы могутъ быть произведены не иначе, какъ по особому постановленію Общаго Собранія.

### Управленіе дѣлами Общества.

§ 15.

Органами Общества являются: Общее Собраніе, Правленіе Общества и Ревизіонная Комиссія.

§ 16.

Завѣдываніе дѣлами Общества возлагается на Правленіе Общества и на Общее Собраніе его членовъ.



ւած տոկոսաբեր թղթերի և պահւում են Պետական Բանկի հաստատութիւնների մէջ։ Ծախսի դրամագլուխը պէտք է պահուի ընթացիկ հաշւով Ս.-Պետերբուրգ քաղաքի վարկային հաստատութիւններից մէկի մէջ։

Նախագահի կամ գանձապահի ձեռին կարող են մնալ մօտակայ ընթացիկ ծախսերի համար անհրաժեշտ փոքր գումարներ։ Այս գումարների, ինչպէս և ծախսի դրամագլխի քանակը որոշում է Ընդհանուր Ժողովը։

§ 14.

Գումարները ծախսում է Ընկերութեան Վարչութիւնը Ընդհանուր Ժողովի իւրաքանչիւր տարի հաստատած նախահաշուի հիման վրայ։ Նախահաշուից դուրս ծախսեր կարող են լինել միմիայն Ընդհանուր Ժողովի առանձին որոշմամբ։

### Ընկերութեան գործերի կառավարութիւնը։

§ 15.

Ընկերութեան գործող մարմիններն են. Ընդհանուր Ժողովը, Ընկերութեան Վարչութիւնը և Վերաստուգիչ Յանձնաժողովը։

§ 16.

Ընկերութեան գործերը վարում են Ընկերութեան Վարչութիւնը և Ընկերութեան անդամների Ընդհանուր Ժողովը։

## Правленіе Общества.

§ 17.

Правленіе состоитъ, въ Петербургѣ, изъ опредѣляемаго Общимъ Собраніемъ числа лицъ въ количествѣ не менѣе шести, избираемыхъ Собраніемъ изъ членовъ Общества, срокомъ на три года.

§ 18.

Для замѣщенія членовъ Правленія, на случай продолжительнаго отсутствія или выбытія ихъ ранѣе срока, Общее Собраніе избираетъ къ нимъ на всѣ три года трехъ кандидатовъ. Кандидаты замѣщаютъ отсутствующихъ членовъ по старшинству времени ихъ избранія. Кандидаты приглашаются на всѣ засѣданія съ правомъ подачи голоса въ случаѣ отсутствія членовъ Правленія. Въ члены Правленія и въ кандидаты къ нимъ могутъ быть избираемы лица обоего пола.

Члены Правленія избираютъ изъ своей среды Предсѣдателя, Товарища Предсѣдателя, Казначея и Секретаря, двѣ послѣднія должности могутъ быть соединены въ одномъ лицѣ, по усмотрѣнію Правленія.

§ 19.

Составъ Правленія возобновляется не единовременно, но ежегодно выбываетъ по очереди 1/3 чле-



## Ընկերութեան Վարչութիւնը։

§ 17.

Ընկերութեան Վարչութիւնը գտնւում է Պետերբուրգում և բաղկանում է Ընդհանուր Ժողովի որոշած թւով, սակայն ոչ պակաս քան վեց անձերից, որոնց ընտրում է Ընդհանուր Ժողովը Ընկերութեան անդամներից, երեք տարուայ համար։

§ 18.

Վարչութեան անդամներին նրանց բացակայութեան ժամանակ կամ շրջանը լրանալուց առաջ դուրս գալու դէպքում փոխարինելու համար ընտրւում են Ընդհանուր Ժողովից երեք փոխանդամ, երեք տարուայ համար։ Փոխանդամները փոխարինում են բացակայ անդամներին իրանց ընտրութեան ժամանակի աւագութեան կարգով։ Փոխանդամները հրաւիրւում են բոլոր նիստերին, իսկ ձայն տալու իրաւունք ունին Վարչութեան անդամների բացակայութեան դէպքում։ Վարչութեան անդամ և փոխանդամ կարող են ընտրուել երկու սեռի անձինք։

Վարչութեան անդամներն ընտրում են իրանց միջից նախագահ, փոխ-նախագահ, գանձապահ և քարտուղար· վերջին երկու պաշտօնները կարող է վարել նոյն անձը, Վարչութեան հայեցողութեամբ։

§ 19.

Վարչութեան կազմը նորոգւում է ոչ միաժամանակ, այլ իւրաքանչիւր տարի հեռանում է

новъ и кандидатовъ онаго. Выбывающія лица могутъ быть вновь избираемы въ Правленіе.

Примѣчаніе. Въ первый годъ открытія Общества очередь выбытія членовъ и кандидатовъ опредѣляется жеребьемъ.

§ 20.

Правленіе Общества собирается черезъ каждыя двѣ недѣли по приглашенію Предсѣдателя. По заявленію трехъ членовъ Предсѣдатель также долженъ созвать засѣданіе.

§ 21.

Членъ Правленія, не принимавшій участія въ засѣданіяхъ его въ продолженіе 6-ти мѣсяцевъ, считается сложившимъ съ себя это званіе.

§ 22.

Для того, чтобы засѣданіе Правленія считалось состоявшимся, требуется присутствіе въ засѣданіи по крайней мѣрѣ трехъ членовъ, считая въ томъ числѣ и Предсѣдателя или его товарища.

Въ случаѣ отсутствія Предсѣдателя и Товарища его въ засѣданіяхъ Правленія предсѣдательствуетъ одинъ изъ присутствующихъ членовъ Правленія, по взаимному ихъ соглашенію.



անդամների և փոխանդամների երրորդ մասը: Հեռացող անդամները կարող են նորից ընտրուել նոյն պաշտօնների համար:

Ծանօթութիւն. Ընկերութեան բացման առաջին և երկրորդ տարին անդամների և փոխ-անդամների հեռանալու հերթը որոշւում է վիճակով:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

§ 20.

Ընկերութեան Վարչութեան նիստերը տեղի են ունենում երկու շաբաթը մի անգամ, նախագահի հրաւէրով. եթէ Վարչութեան երեք անդամը ցանկութիւն յայտնեն, Նախագահը պարտաւոր է նոյնպէս նիստ գումարելու:

1004/15194

§ 21.

Վարչութեան այն անդամը, որ չէ մասնակցել նիստերին շարունակ վեց ամիս, համարւում է իւր պաշտօնից հրաժարուած:

§ 22.

Որպէս զի Վարչութեան նիստը կայացած համարուի, անհրաժեշտ է գոնէ երեք անդամի ներկայութիւնը, նախագահին կամ փոխ-նախագահին միասին հաշուելով:

Երբ նախագահը կամ փոխ-նախագահը բացակայ են, նիստերին նախագահում է Վարչութեան անդամներից մէկը, փոխադարձ համաձայնութեամբ:

§ 23.

Рѣшенія Правленія постановляются простымъ большинствомъ голосовъ наличныхъ членовъ, о чемъ и составляется журналъ за общими ихъ подписями, безъ изложенія мнѣнія каждаго изъ присутствовавшихъ въ засѣданіи членовъ.

Въ случаѣ равенства голосовъ мнѣніе предсѣдательствующаго даетъ перевѣсъ.

§ 24.

На обязанности Правленія лежитъ: а) распредѣленіе занятій между членами Правленія, по взаимному соглашенію; б) собираніе свѣдѣній о прибѣгающихъ къ помощи или покровительству Общества; в) разрѣшеніе и выдача необходимыхъ пособій; г) ежемѣсячное свидѣтельствованіе суммъ и имуществъ Общества; д) созваніе Общихъ Собраній; е) попеченіе объ увеличеніи средствъ Общества приглашеніемъ къ пожертвованіямъ, устройствомъ спектаклей и т. д.; ж) ближайшее попеченіе и надзоръ за учрежденіями Общества; з) представленіе Общему Собранію отчета о дѣятельности Общества за истекшій годъ съ изложеніемъ предположеній на будущее время; и) избраніе пожизненныхъ и дѣйствительныхъ членовъ; і) назначеніе и увольненіе должностныхъ лицъ по учрежденіямъ Общества; к) веденіе списковъ членовъ Общества; л) наблюденіе за своевременнымъ поступленіемъ годовыхъ членскихъ взносовъ и исключеніе изъ списковъ членовъ Общества лицъ, не уплатившихъ



§ 23.

Վարչութեան վճիռները կայանում են ներկայ եղող անդամների ձայների հասարակ մեծամասնութեամբ. այդ մասին կազմւում է օրագիր նրանց ամենի ստորագրութեամբ, իսկ անդամներից իւրաքանչիւրի կարծիքը չի արձանագրւում։

Ձայների հաւասարութեան դէպքում գերակշռութիւն է տալիս նախագահի ձայնը։

§ 24.

Վարչութեան պարտականութիւններն են. ա) Պարապմունքները բաշխել Վարչութեան անդամների մէջ փոխադարձ համաձայնութեամբ. բ) Տեղեկութիւններ ժողովել Ընկերութեան օգնութեանը կամ հովանաւորութեանը դիմողների մասին. գ) Վճռել և տալ անհրաժեշտ նպաստները. դ) Իւրաքանչիւր ամիս ստուգել Ընկերութեան գումարները և ստացուածքը. ե) Հրաւիրել Ընդհանուր Ժողովներ. զ) Հոգալ Ընկերութեան միջոցները հարստացնելու մասին, հրաւիրելով նուիրաբերութիւններ անելու, կազմակերպելով ներկայացումներ և այլն. է) Մօտիկ հսկողութիւն և խնամք ունենալ Ընկերութեան հաստատութիւնների վրայ. ը) Ներկայացնել Ընդհանուր Ժողովին հաշիւ Ընկերութեան տարեկան գործունէութեան մասին և մտադրութիւններն ու ծրագրերը ապագայի վերաբերմամբ. թ) Ընտրել մշտական և իսկական անդամներ. ժ) Նշանակել և արձակել Ընկերութեան հաստատութիւնների ծառայողներին. ի) Պահել Ընկերութեան անդամների ցուցակը. լ) Հսկել, որ

въ теченіе года членскаго взноса; м) правильное веденіе счетоводства и дѣлопроизводства по Обществу; н) разсмотрѣніе отдѣльныхъ заявленій членовъ Общества и предварительная разработка всѣхъ вообще дѣлъ, вносимыхъ въ Общее Собраніе.

**Примѣчаніе I.** Въ случаяхъ, не терпящихъ отлагательства, пособія могутъ быть разрѣшаемы Предсѣдателемъ подъ личною его отвѣтственностью и при непремѣнномъ условіи доведенія до свѣдѣнія Правленія въ ближайшее его засѣданіе. Предѣльный размѣръ такого пособія и общая сумма ихъ опредѣляются Правленіемъ.

**Примѣчаніе II.** Составленныя Правленіемъ инструкціи и правила вносятся имъ на утвержденіе ближайшаго Общаго Собранія.

§ 25.

Съ разрѣшенія Общаго Собранія Правленію Общества предоставляется: а) пріобрѣтать и отчуждать недвижимыя имущества; б) заключать всякаго рода договоры и акты; в) вчинять установленнымъ порядкомъ иски по дѣламъ Общества и защищать дѣла Общества черезъ особыхъ повѣренныхъ; г) принимать необходимыя мѣры къ пріему завѣщаннаго Обществу имущества и д) обяза-



իւր ժամանակին ստացուին տարեկան անդամավճարները, և տարուայ ընթացքում տուրքը չվճարող անդամներին դուրս հանել Ընկերութեան ցանկից. խ) Կանոնաւորապէս վարել Ընկերութեան հաշուապահութիւնը և գործավարութիւնը. ծ) Քննել Ընկերութեան անդամների առանձին յայտարարութիւնները և նախապէս մշակել Ընդհանուր Ժողովին ներկայացուելիք բոլոր գործերն առհասարակ։

**Ծանօթութիւն 1.** Անյետաձգելի դէպքերում կարող է նպաստներ որոշել և տալ Նախագահը իւր անձնական պատասխանատուութեամբ և Վարչութեան մօտակայ նիստին զեկուցանելու անհրաժեշտ պայմանով. այսպիսի նպաստների քանակը և նրանց ընդհանուր գումարը որոշում է Վարչութիւնը։

**Ծանօթութիւն 2.** Վարչութիւնը իւր կազմած հրահանգներն ու կանոնները ներկայացնում է մօտակայ Ընդհանուր Ժողովին ի հաստատութիւն։

§ 25.

Ընդհանուր Ժողովի որոշմամբ Ընկերութեան Վարչութեանն իրաւունք է տրւում. ա) Ձեռք բերել, գնել և վաճառել անշարժ կայքեր. բ) Կապել ամէն տեսակ պայմաններ և ակտեր. գ) Սահմանուած կարգերով վարել ամէն տեսակ դատեր Ընկերութեան գործերին վերաբերեալ և պաշտպանել Ընկերութեան գործերը առանձին հաւատարմատարների միջոցով. դ) Անհրաժեշտ միջոցներ ձեռք

тельное публикованіе подробнаго годового отчета о суммахъ и дѣятельности Общества, а также годовой смѣты по утвержденіи ея Общимъ Собраніемъ.

§ 26.

Казначей принимаетъ постоянные денежные взносы и пожертвованія, производитъ денежныя и другія выдачи, ведетъ приходо-расходныя книги, денежную и матеріальную, и вообще все счетоводство и составляетъ годовую отчетность.

**Примѣчаніе.** Приходо-расходныя книги выдаются за печатью Общества, подписью Предсѣдателя и скрѣпою Секретаря.

§ 27.

Секретарь составляетъ журналы Правленія, ведетъ алфавиты о всѣхъ лицахъ, прибѣгающихъ къ помощи Общества (съ объясненіемъ мѣста жительства нуждающихся, собранныхъ о нихъ свѣдѣній и какого рода оказанномъ пособіи) и вообще всю переписку Общества, а также составляетъ отчеты о дѣйствіяхъ Общества. Всѣ исходящія бумаги подписываются Предсѣдателемъ и скрѣпляются Секретаремъ.



*առնել Ընկերութեան կտակուած կայքն ընդունելու. ե) Պարտաւոր կերպով հրատարակել մանրամասն տարեկան հաշիւ Ընկերութեան գումարների և գործունէութեան մասին, նոյնպէս և տարեկան նախահաշիւը՝ Ընդհանուր ժողովի հաստատելուց յետոյ։*

§ 26.

*Գանձապահն ընդունում է մշտական դրամական վճարներն և նուիրաբերութիւնները, կատարում է դրամական և այլ հատուցումները, վարում է մտից և ելից մատեանները, գումարների և իրեղէնների ցուցակը և առհասարակ ամբողջ հաշուապահութիւնը և կազմում է տարեկան հաշուետուութիւնը։*

**Ծանօթութիւն.** *Մտից և ելից մատեանները տրւում են Ընկերութեան կնքով, նախագահի և քարտուղարի ստորագրութեամբ։*

§ 27.

*Քարտուղարը կազմում է Վարչութեան օրագրերը, ցուցակագրում է Ընկերութեան օգնութեանը դիմողներին, (նշանակելով կարիք ունեցողների բնակութեան տեղը, նրանց մասին ժողովուած տեղեկութիւնները և տրուած օգնութեան եղանակը), վարում է առհասարակ Ընկերութեան ամբողջ գրագրութիւնը, նաև կազմում է զեկուցումներ Ընկերութեան գործերի մասին։ Արձակուած բոլոր թղթերն ստորագրում են նախագահը և քարտուղարը։*

§ 28.

Члены Общества могутъ являться (безъ права рѣшающаго голоса) въ засѣданія Правленія и заявлять свои мнѣнія объ улучшеніяхъ или полезныхъ нововведеніяхъ, касающихся дѣйствій Общества. Если Правленіе, по обсужденіи этихъ предложеній, признаетъ ихъ основательными, то дѣлаетъ по нимъ исполненіе само; или въ случаяхъ, превышающихъ его власть, представляетъ на разсмотрѣніе Общаго Собранія. При отклоненіи Правленіемъ предложенія, члену, заявившему его, предоставляется требовать отъ Правленія внесенія предложенія въ ближайшее Общее Собраніе. Правленіе обязано исполнить это требованіе, если оно заявлено ему не позже мѣсяца послѣ объявленія члену Общества объ отклоненіи его предложенія.

### Общее Собраніе.

§ 29.

Общія Собранія бываютъ очередныя и чрезвычайныя. Очередныя собранія собираются въ первое Воскресенье Февраля каждаго года, а чрезвычайныя, въ случаѣ надобности, по постановленію Правленія или Ревизіонной Коммиссіи, а также по



§ 28.

*Ընկերութեան անդամները կարող են ներկայ լինել — առանց վճռական ձայնի իրաւունքի — Վարչութեան նիստերին և յայտնել իրանց կարծիքները Ընկերութեան գործողութիւններին վերաբերեալ բարելաւումների և օգտաւէտ նորմուծութիւնների մասին։ Այդ առաջարկութիւնները քննուելուց յետոյ, եթէ Վարչութիւնը հիմնաւոր է գտնում, կամ ինքն է իրագործում, կամ այն դէպքերում, երբ նրա իրաւասութիւնից բարձր են, ներկայացնում է Ընդհանուր Ժողովի քննութեանը։ Եթէ Վարչութիւնը որև է առաջարկ մերժէ, առաջարկող անդամն իրաւունք ունի պահանջելու Վարչութիւնից, որ առաջարկը ներկայացնէ մօտակայ Ընդհանուր Ժողովին։ Վարչութիւնը պարտաւոր է կատարելու այս պահանջը, եթէ յայտնուած է նրան մի ամսից ոչ ուշ, հաշուելով այն օրից, երբ Ընկերութեան անդամին յայտնուած է իր առաջարկութեան մերժումը։*

### Ընդհանուր Ժողով։

§ 29.

*Ընդհանուր Ժողովները լինում են հերթական և արտակարգ· հերթական Ընդհանուր Ժողովները հրաւիրւում են իւրաքանչիւր տարի փետրուար ամսի առաջին կիրակի օրը, իսկ արտակարգ Ընդհանուր Ժողովները՝ երբ կարիք է լինում, Վարչութեան կամ Վերստուգող Յանձնաժողովի որոշ-*

письменному требованію 1/4 членовъ Общества, живущихъ въ раіонѣ дѣятельности Общества.

**Примѣчаніе.** О времени и предметахъ занятій Общихъ Собраній Правленіе обязано каждый разъ заблаговременно доводить до свѣдѣнія Начальника мѣстной полиціи и Членовъ Общества.

## § 30.

Въ очередныхъ Собраніяхъ избираются: а) Предсѣдатель и Секретарь Общаго Собранія, а также почетные члены Общества, члены Правленія, Ревизіонная Коммиссія и кандидаты къ нимъ; б) опредѣляется размѣръ членскаго взноса дѣйствительныхъ членовъ на будущій годъ; в) разсматривается и утверждается годовой отчетъ о суммахъ и дѣятельности Общества, а также смѣта на начинающійся годъ и докладъ по онымъ Ревизіонной Коммиссіи; г) опредѣляется размѣръ ежегодныхъ отчисленій, идущихъ на образованіе запаснаго и спеціальнаго капиталовъ; д) утверждаются правила и инструкціи, составленныя Правленіемъ для учрежденій или для должностныхъ лицъ Общества; е) исключаются изъ состава Общества члены, дѣятельность коихъ нарушила интересы Общества; з) разрѣшаются вопросы объ измѣненіи или дополненіи Устава Общества, а также о закрытіи онаго; и) опредѣляется предѣльный размѣръ и общая сумма пособій, вы-



*մամբ, նոյնպէս և Ընկերութեան գործունէութեան շրջանում ապրող անդամների 1/4 մասի գրաւոր պահանջմամբ։*

***Ծանօթութիւն.*** *Ընդհանուր Ժողովի ժամանակի և զբաղմունքի առարկաների մասին Վարչութիւնը պարտաւոր է իւրաքանչիւր անգամ վաղօրօք յայտնել տեղական ոստիկանութեան պետին և Ընկերութեան անդամներին։*

## § 30.

*Հերթական Ընդհանուր Ժողովներում ընտրւում են. ա) Ժողովի նախագահը և քարտուղարը, նոյնպէս և ընկերութեան պատւաւոր անդամները, Վարչութեան և Վերստուգիչ Յանձնաժողովի անդամները և փոխանդամները. բ) Որոշւում է իսկական անդամների առաջիկայ տարուայ անդամավճարների քանակը. գ) Քննւում և հաստատւում է Ընկերութեան գումարների և գործունէութեան տարեկան հաշիւը, սկսուող տարուայ նախահաշիւը և Վերստուգող Յանձնաժողովի զեկուցումը նրանց մասին. դ) Որոշւում է պահեստի և յատուկ դրամագլուխների համար յատկացուելիք տարեկան գումարների քանակը. ե) Հաստատւում են Վարչութեան կազմած կանոններն ու հրահանգները ընկերութեան հիմնարկութիւնների կամ ծառայողների համար. զ) Դուրս են հանւում Ընկերութեան կազմից այն անդամները, որոնց գործունէութիւնը խանգարել է Ընկերութեան շահերը. է) Վճռւում են Ընկերութեան կանոնադրութեան փոփոխման*

даваемыхъ въ экстренныхъ случаяхъ единолично Предсѣдателемъ Правленія; і) разрѣшаются всѣ вообще вопросы, превышающія права, предоставленныя по Уставу Правленію Общества.

Къ обсужденію въ Общихъ Собраніяхъ дозволяются лишь такіе предметы, которые относятся непосредственно къ опредѣленной Уставомъ дѣятельности Общества.

Всѣ вопросы, подлежащіе обсужденію въ Общемъ Собраніи, вносятся въ таковое Правленіемъ.

§ 31.

Общія Собранія открываются Предсѣдателемъ Правленія. Предсѣдателемъ Собранія избирается каждый разъ особое лицо. Когда въ Общемъ Собраніи разсматриваются отчеты Правленія и Ревизіонной Коммиссіи, или слушаются жалобы на ихъ дѣйствія, Предсѣдателемъ Собранія не можетъ быть лицо, принадлежащее къ составу Правленія или Ревизіонной Коммиссіи.

§ 32.

Для дѣйствительности Общаго Собранія необходимо присутствіе въ немъ по крайней мѣрѣ 1/3



կամ լրացման և նրա փակման վերաբերեալ հարցերը. ը) Որոշւում է այն նպաստների մեծագոյն քանակը և ընդհանուր գումարը, որ արտակարգ դէպքերում տալիս է ինքը՝ Վարչութեան նախագահը. թ) Վճռւում են առհասարակ այն բոլոր հարցերը, որոնք կանոնադրութեամբ Ընկերութեան Վարչութեանը վերապահուած իրաւունքներից բարձր են։

Ընդհանուր ժողովում քննութեան առարկայ են դառնում միմիայն այն խնդիրները, որոնք անմիջապէս վերաբերում են Ընկերութեան գործունէութեանը, կանոնադրութեան համաձայն։

Ընդհանուր ժողովում քննուելիք բոլոր հարցերը ներկայացնում է ժողովին Վարչութիւնը։

§ 31.

Ընդհանուր ժողովը բաց է անում Վարչութեան նախագահը. Ժողովի նախագահ ընտրւում է իւրաքանչիւր անգամ առանձին անձն։ Երբ Ընդհանուր ժողովում քննւում են Վարչութեան և Վերստուգող Յանձնաժողովի հաշիւներն ու զեկուցումները կամ լսւում են բողոքներ նրանց գործունէութեան մասին, Ժողովի նախագահ չի կարող լինել Վարչութեան կամ Վերստուգող Յանձնաժողովի կազմին պատկանող մէկը։

§ 32.

Որպէս զի Ընդհանուր ժողովն օրինաւոր համարուի, անհրաժեշտ է Պետերբուրգում և նրա

членовъ Общества, живущихъ въ С.-Петербургѣ и его окрестностяхъ.

Вопросы рѣшаются простымъ большинствомъ голосовъ.

§ 33.

Для рѣшенія вопросовъ о принятіи завѣщаннаго Обществу имущества, о пріобрѣтеніи или отчужденіи недвижимой собственности, объ измѣненіи Устава, о расходованіи запаснаго капитала, объ исключеніи членовъ изъ состава Общества — необходимо присутствіе въ Общемъ Собраніи $^1/_2$ всѣхъ членовъ Общества, живущихъ въ С.-Петербургѣ и его окрестностяхъ, а также согласіе не менѣе $^2/_3$ присутствующихъ въ собраніи членовъ.

§ 34.

Если Общее Собраніе не состоится за неприбытіемъ требуемаго числа членовъ (§§ 32 и 33), то не ранѣе, какъ черезъ двѣ недѣли послѣ сего созывается для обсужденія тѣхъ же вопросовъ вторичное Общее Собраніе, которое будетъ считаться состоявшимся независимо отъ числа явившихся членовъ, о чемъ члены Общества предупреждаются въ извѣщеніяхъ.

§ 35.

Всѣ выборы въ Общемъ Собраніи производятся закрытою баллотировкою.



*արուարձաններում ապրող անդամների գոնէ $^1/_3$ մասի ներկայութիւնը։*

*Հարցերը վճռւում են ձայների հասարակ մեծամասնութեամբ։*

§ 33.

*Ընկերութեանը կտակուած ստացուածքն ընդունելու, անշարժ կայքեր ձեռք բերելու կամ գնելու և ծախելու, կանոնադրութիւնը փոխելու, պահեստի դրամագլուխը ծախսելու, անդամներին Ընկերութեան կազմից հանելու վերաբերեալ հարցերը վճռելիս անհրաժեշտ է Պետերբուրգում և նրա արուարձաններում ապրող բոլոր անդամների $^1/_2$ մասի ներկայութիւնը, իսկ ժողովում ներկայ եղող անդամների $^2/_3$ մասի համաձայնութիւնը։*

§ 34.

*Եթէ Ընդհանուր Ժողովը չկայանայ պահանջուած թւով անդամների բացակայութեան պատճառով* (§§ 32, 33), *ոչ շուտ քան երկու շաբաթ յետոյ նոյն հարցերի քննութեան համար հրաւիրւում է երկրորդ անգամ Ընդհանուր Ժողով, որը կայացած է համարւում անկախ ներկայ եղող անդամների թւից. այս մասին յայտնւում է Ընկերութեան անդամներին հրաւիրաթերթերի մէջ։*

§ 35.

*Ընդհանուր Ժողովում բոլոր ընտրութիւնները կատարւում են գաղտնի քուէարկութեամբ։*

§ 36.

О постановленіяхъ Общаго Собранія составляется журналъ за подписью присутствующихъ.

### Ревизіонная Коммиссія.

§ 37.

Ревизіонная Коммиссія избирается ежегодно Общимъ Собраніемъ въ составѣ 3-хъ членовъ и 2-хъ кандидатовъ къ нимъ, которые на случай болѣзни или досрочнаго выбытія кого либо изъ членовъ Ревизіонной Коммиссіи замѣняютъ ихъ.

§ 38.

Члены Коммиссіи выбираютъ Предсѣдателя изъ своей среды.

§ 39.

Ревизіонная Коммиссія обязана періодически контролировать суммы, имущество и книги Общества.

На ея же обязанности лежитъ повѣрка годового отчета и смѣты, для чего Правленіе передаетъ Коммиссіи отчетъ и смѣту не позднѣе двухъ недѣль до Общаго Собранія, которому они должны быть представлены. Ревизіонная Коммиссія имѣетъ право дѣлать также внезапныя ревизіи по своему усмотрѣнію или по письменному о томъ, съ ука-



§ 36.

Ընդհանուր Ժողովի որոշումների մասին կազմւում է օրագիր ներկայ եղողների ստորագրութեամբ։

### Վերստուգող Յանձնաժողով։

§ 37.

Վերստուգող Յանձնաժողովն ընտրւում է իւրաքանչիւր տարի Ընդհանուր Ժողովից և բաղկանում է երեք անդամից և երկու փոխ-անդամից․ վերջիններս փոխարինում են անդամներին հիւանդութեան կամ ժամանակից առաջ դուրս գալու դէպքում։

§ 38.

Վերստուգող Յանձնաժողովի անդամներն ընտրում են նախագահ իրանց միջից,

§ 39.

Վերստուգող Յանձնաժողովը պարտաւոր է պարբերաբար ստուգել Ընկերութեան գումարները, կայքը և մատեանները։ Նրա պարտականութիւնն է նաև ստուգել տարեկան հաշիւը և նախահաշիւը, որի համար Վարչութիւնը յանձնում է Վերստուգող Յանձնաժողովին հաշիւը և նախահաշիւը ոչ ուշ, քան երկու շաբաթ Ընդհանուր Ժողովից առաջ, որին պէտք է ներկայացուեն նրանք։ Վերստուգող Յանձնաժողովն իրաւունք ունի նաև անակնկալ քննութիւններ կատարելու իւր հայեցո-

заніемъ основаній, требованію 1/10 части членовъ Общества.

§ 40.

Для производства ревизіи требуется наличность не менѣе 2-хъ членовъ Коммиссіи, считая въ томъ числѣ и Предсѣдателя.

§ 41.

О результатахъ своей дѣятельности Коммиссія представляетъ свой докладъ очередному Общему Собранію Общества.

Общія Правила.

§ 42.

Общество состоитъ въ вѣдѣніи Министерства Внутреннихъ Дѣлъ.

§ 43.

Общество имѣетъ печать со своимъ наименованіемъ, хранящуюся у Предсѣдатля или у замѣстителя его.

§ 44.

Всѣ выборныя должностныя лица Общества служатъ ему безвозмездно.



գութեամբ կամ Ընկերութեան անդամների 1/10 մասի գրաւոր պահանջմամբ, որի մէջ պէտք է հիմունքները ցոյց տուած լինին։

§ 40.

Վերստուգումը կատարելու համար անհրաժեշտ է Յանձնաժողովի գոնէ երկու անդամի ներկայութիւնը, հաշուելով այդ թւի մէջ նաև նախագահին։

§ 41.

Իր գործունէութեան արդիւնքի մասին Յանձնաժողովը ներկայացնում է իւր զեկուցումը Ընկերութեան հերթական Ընդհանուր Ժողովին։

Ընդհանուր կանոններ։

§ 42.

Ընկերութիւնը գտնւում է Ներքին Գործերի Մինիստրութեան իրաւասութեան ներքոյ։

§ 43.

Ընկերութիւնն ունի կնիք իւր տիտղոսով, որ պահւում է Վարչութեան նախագահի կամ նրա փոխանորդի մօտ։

§ 44.

Ընկերութեան բոլոր ընտրուած պաշտօնեաները ծառայում են նրան առանց վարձատրութեան։

§ 45.

Члены Общества могутъ получать отъ Правленія билеты или дипломы, удостовѣряющіе принадлежность ихъ къ Обществу.

§ 46.

Отчетный годъ Общества начинается съ 1-го Января.

## Закрытіе Общества.

§ 47.

Если по какимъ либо обстоятельствамъ Общество прекратитъ свои дѣйствія, то всѣ денежные капиталы и все имущество Общества, могущіе оказаться по ликвидаціи свободными, поступаютъ въ собственность С.-Петербургскихъ Армянскихъ церквей.

§ 48.

Специальные капиталы Общества, перешедшіе въ собственность С.-Петербургскихъ Армянскихъ Церквей, должны продолжать служить цѣлямъ, коимъ они были предназначены.

§ 49.

О закрытіи Общества доводится до свѣдѣнія подлежащихъ властей.



§ 45.

Ընկերութեան անդամները կարող են ստանալ Վարչութիւնից տոմսակներ կամ վկայագրեր, որոնք հաստատում են նրանց անդամակցութիւնը։

§ 46.

Ընկերութեան հաշուետարին սկսւում է յունուարի մէկից։

## Ընկերութեան փակումը։

§ 47.

Եթէ որևէ պատճառով Ընկերութիւնը դադարեցնէ իւր գործունէութիւնը, գործերը վերջացնելուց յետոյ մնացած բոլոր դրամագլուխներն ու ստացուածքը կը դառնան Ս.-Պետերբուրգի հայոց եկեղեցու սեփականութիւն։

ՀՍՍՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Би...
1922

§ 48.

Ընկերութեան յատուկ դրամագլուխները Ս.-Պետերբուրգի հայոց եկեղեցու սեփականութիւն դառնալուց յետոյ պէտք է դարձեալ ծառայեն այն նպատակներին, որոնց յատկացուած են։

§ 49.

Ընկերութեան փակման մասին տեղեկութիւն է տրւում պատշաճաւոր իշխանութիւններին։

ՀՀ Ազգային գրադարան
NL0227205

42.808